ԿԱՐԾԻՔ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Նարեկ Գագիկի Շարաֆյանի՝ «Հայ բնակչության նկատմամբ Խորհրդային Ադրբեջանի զանգվածային ոճրագործությունների քաղաքականությունը 1988-1990 թթ.» թեմայով ատենախոսության վերաբերյալ

2020 թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմի Արցախի դեմ սանձազերծված ագրեսիան և պատերազմի ժամանակ խաղաղ բնակչության նկատմամբ տեղ գտած հանցագործությունները, ինչպես նաև հետպատերազմյան շրջանում էթնիկ ատելության հենքի վրա իրականացվող քայլերը՝ հատկապես հայ ռազմագերիների նկատմամբ ցուցաբերած անմարդկային վերաբերմունքը, ևս մեկ անգամ եկան փաստելու, որ հանձին Ադրբեջանի՝ գործ ունենք պետական մակարդակով ատելություն քարոզող մի պետության հետ, որտեղ էթնիկ հայի հանդեպ տարվում է քսենոֆոբիայի անթաքույց քաղաքականություն: Դրա մասին վկայում են թե՛ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի, թե՛ այլ պաշտոնատար անձանց բազմաթիվ ելույթներ, ինչպես նաև վաղ տարիքից ադրբեջանցիների շրջանում քարոզվող ատելության պետական քաղաքականությունը:

Այս ամենի համատեքստում հատկապես կարևոր է ՄԱԿ–ի Արդարադատության դատարանում Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի դատական հայցը, որի նպատակն է ստանալ միջազգային հստակ գնահատական Ադրբեջանի՝ ռասիստական պետություն լինելու վերաբերյալ: Այս գործընթացները ցույց են տալիս, որ Ն. Շարաֆյանի ատենախոսությունը և դրանում արծարծված խնդիրները առավել քան արդիական են և կարող են կիրառական օգուտ ունենալ նաև միջազգային ատյաններում Ադրբեջանի դեմ իրավական գործողություններ իրականացնելու տեսանկյունից: Ատենախոսության գլխավոր նպատակն է փաստական հենքի վրա վերլուծել Արցախյան շարժման մեկնարկից՝ 1988-ից մինչև 1990 թթ. ընթացքում Ադրբեջանական ԽՍՀ–ում՝ Սումգայիթում, Գանձակում և Բաքվում, բնակվող հայերի նկատմամբ իրագործված ցեղասպան գործողությունները՝ վերլուծելով դրանց պատմական և իրավական ասպեկտները:

Ն. Շարաֆյանի թեկնածուական ատենախոսությունն, ընդհանուր առմամբ, համապատասխանում է գիտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Այս հետազոտությունն ընդգրկում է առաջադրված խնդիրների հետազոտության ծավալը՝ ապահովելով համապատասխան մտահանգումների տեսքով արված հետևությունները:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 167 էջ: Ներածության մեջ տրված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակը, մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրվածության աստիճանը:

Ն. Շարաֆյանի ատենախոսությունը համակարգված ուսումնասիրություն է, թեև տեղ են գտել որոշ թերացումներ գիտական ապարատում՝

- Մասնավորապես, ատենախոսության փաստական հենքը կլիներ ավելի հիմնավոր, եթե Ն. Շարաֆյանը օգտագործեր ուսումնասիրվող ժամանակահատվածում լույս տեսնող պարբերական մամուլի մի շարք հրապարակումներ: Աշխատանքը մեծապես կշահեր, եթե օգտագործվեին «Бакинский рабочий», «Известия», «Московские новости», «Коммунист», և «Правда» թերթերի՝ 1988-ից 1990 թթ. սույն ատենախոսության թեմային առնչվող համարները, որտեղ հիմնականում ցույց է տրվում, թե ինչպես են հայերի կոտորածները մեկնաբանվել և գնահատվել խորհրդային մամուլի կողմից, առկա են նաև կարևոր վկայություններ դեպքերի ականատեսների և դատական գործընթացների մասնակիցների կողմից:
- Առաջին գլխում հեղինակը, անդրադառնալով հայերի հանդեպ իրագործված ոճրագործությունների նախապատմությանը և հիմքերին, պատմական ակնարկ է կատարում հայ–թաթարական բախումների վերաբերյալ՝ դրանք ներկայացնելով որպես Օսմանյան կայսրության իրագործած քաղաքականության հետևանք: Կարծում ենք՝ արժանահիշատակ է նաև ցարական Ռուսաստանի վարած քաղաքականությունը այդ հարցում, որի հետևանքով նաև հրահրվել էին հայ–թաթարական բախումները: Այդ

մասին կարևոր հիշատակումներ կան գերմանացի պատմաբան Յորգ Բաբերովսկու աշխատության մեջ, որը Ն. Շարաֆյանն օգտագործել է ատենախոսության թեման հետազոտելիս[1]:

- Աշխատության 38—րդ էջում ատենախոսության հեղինակը նշում է. «Հեյդար Ալիևը իր հարցազրույցներից մեկում խոստովանել է, որ ինքն արել է ամեն բան որպեսզի փոխի Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրությունը հօգուտ ադրբեջանիցներին», սակայն նշված է չէ աղբյուրը: Ենթադրում ենք, որ խոսքը Հեյդար Ալիևի՝ 1999 թ. նոյեմբերի 10–ի ելույթի մասին է, որտեղ Ադրբեջանի նախկին նախագահը արձանագրել է, թե ինչպես է ամեն ինչ արել Լեռնային Ղարաբաղում հայերին ղեկավար պաշտոններից հեռացնելու և դեմոգրաֆիական պատկերը փոխելու համար[2]:
- Աշխատության 3–րդ գլխում Բաքվի ջարդերի մասին խոսելիս չկա արձանագրում, որ խորհրդային զորքերը մտան Բաքու Ադրբեջանում խորհրդային կարգերի տապալումը կանխելու համար[3]:
- Ընդհանուր առմամբ, աշխատանքում պակասում են մեջբերումներ որոշ ադրբեջանցի պաշտոնյաների և ուսումնասիրվող ժամանակահատվածում գործող անձանց այն ելույթներից, որոնք ևս մեկ անգամ գալիս են ապացուցելու հայերի նկատմամբ իրականացված հանցանքների կազմակերպված բնույթը[4]: Նման նյութերը, ինչպես նաև ականատեսների հուշագրությունները[5] ավելի կհարստացնեին աշխատանքի փաստական հենքը:

Հույս ունենք, որ վերոնշյալ դիտարկումները հաշվի կառնվեն Ն. Շարաֆյանի հետագա հետազոտություններում: Ամփոփելով, նշենք, որ հատկապես կարևոր է աշխատության

---

[1] Տես՝ Баберовски Й., Враг есть везде. Сталинизм на Кавказе, Москва, 2010, с. 72-73:

[2] Տես՝ Из беседы Президента Азербайджанской Республики Гейдара Алиева с группой писателей и поэтов Азербайджана - Президентский дворец, 10 ноября 1999 года, https://lib.aliyev-heritage.org/ru/4106418.html, 23.06.2022:

[3] Տես՝ S. Cornell, Nagorno Karabakh, Report no. 46, Department of East European Studies, Uppsala University, 1999, p. 24, https://is.muni.cz/el/fss/jaro2019/POL587/um/Cornell_The_Nagorno-Karabakh_Conflict.pdf, 23.06.2022:

[4] Տես՝ Տ. Հայրապետյան, Ներքաղաքական գործընթացները Ադրբեջանում 1988-1998 թվականներին, Երևան, ԵՊՀ հրատ, 2018, 178 էջ:

[5] Օր.՝ Рыжков Н., Истоки разрушения. Баку. Январь 90-го, http://nash-sovremennik.ru/p.php?y=2005&n=12&id=8, 22.06.2022.

վերջին՝ չորրորդ գլուխը, որտեղ հեղինակը փորձել է կիրառական առաջարկներ ներկայացնել միջազգային իրավական գործիքակազմի համար, սակայն ինչպես ատենախոսն է իրավացիորեն նշում՝ այդ թեման ունի հավելյալ և ավելի խորքային ուսումնասիրման կարիք:

Նարեկ Գագիկի Շարաֆյանի՝ «Հայ բնակչության նկատմամբ Խորհրդային Ադրբեջանի զանգվածային ոճրագործությունների քաղաքականությունը 1988-1990 թթ.» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը արդի և կիրառական աշխատություն է, համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.թ. Տ. Հայրապետյան

Հաստատում եմ՝

29.06.2022